ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՕՎԵՐ ՓԼԵՅ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-25/154 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
8	Մարմնամարզական նստարան – Մարմնամարզության նստարանը հավաքովի գույք է, որը բաղկացած է նստելատեղից, տակամասի մետաղական ոտքերից և հենակից: Նստելատեղը և տակամասը պետք է պատրաստված լինեն հատուկ մշակում անցած սոճու կամ խեժափիճինի կամ փշատերև այլ ծառերի փայտից, պարագծի շուրջը և նստարանի անկյունները պետք է լինեն կլորացված: Մարմանամարզական նստարանի մակերեսը պետք է լինի խնամքով հղկված բարձրորակ խոնավակայուն և չսահող երկու շերտով պատված բարձրորակ երեք բաղադրիչ անգույն լաքով: Նստելատեղի չափերն են՝ 3000մմ երկարություն, 300 մմ լայնություն և 40մմ հաստություն: Տակամասի չափերն են՝ 2600մմ երկարություն, 100 մմ լայնություն և 37-40 մմ հաստություն: Նստարանի մետաղական ոտքերը պետք է հնարավորություն տան ունենալ 300 մմ բարձրություն, ունենան փակ շղթայանման կառուցվածք, ոտքերի բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորելու հնարավորությամբ: Նստարանի մետաղական ոտքերը և հենակը պետք է պատրաստված լինեն 30x30x2,0 մմ մետաղական քառակուսի խողովակից, միացումները՝ զոդման եղանակով, զոդման կարանները պետք է լինեն հղկված,փոշեներկված բարձրակարգ մուգ մոխրագույն անտրացիտ ներկանյութով: Մետաղական կառուցվածքը միացվում է 6 հատ միջանցիկ 8մմ-անոց հեղյուսե մանեկային ամրացումով: Նստատեղի կողմից հեղյուսը պետք է լինի ողորկ, իսկ եզրերը՝ նստատեղի հարթության վրա: Նմուշը /նկար 9/ կցվում է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված

	ողջամիտ ժամկետում պետք է շտկել /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ իրականացվում է Մատակարարի կողմից: Մինչև մատակարարումը չափաբաժնում ներկայացված ապրանքների նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նմուշ նկարները տրվում են զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չեն կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս: (հեռ. - 010599664)

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

СПЛАЙ ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/154 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
8	